

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՁ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ԷԳԱ-34/20.11.18-ԱՄ ծածկագրով գնման բաց մրցույթի

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ ԲԲՍ(220կՎ լարման բաց բաշխիչ սարքվածքի) օդային անջատիչները էլեգազային անջատիչներով փոխարինելու համար հայտարարում է բաց մրցույթ

• Եռաֆազ գապանակային բանեցումով – 4 (չորս) հատ էլեգազային անջատիչ:

Պարամետրերը.

Մեկուսացման ունակությունը

- նոմինալ լարումը 245 կՎ
- աշխատանքի լարումը 245 կՎ

Անջատման ունակությունը

- նոմինալ հոսանքը 2000 Ա
- ջերմակայունության հոսանքը 40 կԱ

• Միաֆազ գապանակային բանեցումով – 6 (վեց) հատ էլեգազային անջատիչ:

Պարամետրերը.

Մեկուսացման ունակությունը

- նոմինալ լարումը 245 կՎ
- աշխատանքի լարումը 245 կՎ

Անջատման ունակությունը

- նոմինալ հոսանքը 2000 Ա
- ջերմակայունության հոսանքը 40 կԱ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի 2) ենթակետով սահմանված կարգով մրցույթում հաղթող կճանաչվի այն մասնակիցը, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

• Կազմակերպության կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները

• Երաշխիքային սպասարկման հավաստագիր

• Պիտանելիության ժամկետի հավաստագիր

• Տեղեկություններ կազմակերպության 2016, 2017 թվականների և 2018թ. 9 ամիսների

ֆինանսական շրջանառության ծավալների մասին

• Շեֆ - մոնտաժ և կարգաբերում իրականացնող մասնագետների տվյալներ:

Ապրանքի հետ մեկտեղ անհրաժեշտ է ներկայացնել.

• Ապրանքի անձնագիր

• Ծագման սերտիֆիկատ

• Որակի սերտիֆիկատ

• Համապատասխանության սերտիֆիկատ

Մրցույթին չեն կարող մասնակցել այն կազմակերպությունները (բացառությամբ ռուսաստանյան և արտասահմանյան հայտնի արտադրողների պաշտոնական ներկայացուցչություններից), որոնց վերջին երեք տարիների (2016թ., 2017թ., 2018թ.-ի 9 ամիսներ) ֆինանսական շրջանառության միջին ծավալը փոքր է իրենց կողմից մրցույթին ներկայացված առաջարկի գնից, ինչպես նաև ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցողները:

Մրցույթին ներկայացվող փաստաթղթերի փաթեթը ՊԱՐՏԱԴԻՐ պետք է ներառի մրցույթին ներկայացվող փաստաթղթերի ցանկ (ստորագրված և կնքված): Հայտը պարունակող ծրարը հայտատուի ներկայացուցչի (ներկայացուցիչների) ներկա-յությամբ բացելուց հետո հանձնաժողովն արձանագրում է փաստաթղթերի ցանկի առկայությունը և ըստ այդ ցանկի ներկայացված փաստաթղթերի առկայությունը փաթեթում:

Նշված փաստաթղթերից (տվյալներից) որևէ մեկը չներկայացնելու դեպքում հայտատուն չի մասնակցի մրցույթին:

Ընկերությունը կարող է ստուգել մասնակիցների կողմից մրցույթին ներկայացված փաստաթղթերի ու տվյալների իսկությունը առանց տվյալ մասնակցին տեղյակ պահելու: Կեղծ կամ ոչ ճիշտ տվյալներ կամ փաստաթղթեր ներկայացրած մասնակիցը կհեռացվի մրցույթից մրցույթի ցանկացած փուլում և պատասխանատվություն կկրի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ոչ գնային չափանիշների սանդղակ

№	Ոչ գնային չափանիշներ	Գործակից
1	Պիտանելիության ժամկետը. Մինչև 5 տարի 6-10 տարի 11-15 տարի 16-20 տարի 21-24 տարի 25 և ավելի տարի	5 10 15 20 25 30
2	Երաշխիքային սպասարկման ժամկետը. Մինչև 3 տարի 3-4 տարի 5 և ավելի տարի	5 10 15
3	Գինը Մրցույթի մասնակիցների առաջարկած ամենացածր գինը Աճման կարգով երկրորդ ամենացածր գինը Աճման կարգով երրորդ ամենացածր գինը Աճման կարգով չորրորդ ամենացածր գինը	20 15 10 5
4	Շեֆ մոնտաժ և կարգաբերում իրականացնող մասնագետների աշխատանքային փորձը Մինչև 5 տարի 6-10 տարի 11 և ավելի տարի	5 10 15
5	Ընկերության գործունեությունը շուկայում և նմանատիպ աշխատանքների իրականացման փորձը Մինչև 5 տարի 6-10 տարի 11-15 տարի 16-20 տարի 21 և ավելի տարի	5 10 15 20 25
6	Ապրանքի ադապտացվածությունը Հրազդանի բնակլիմայական պայմաններին (մինչև -35°C ձմռանը, մինչև +30°C ամռանը, հաշվի առնելով ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը և օդային ավազանի աղտոտվածությունը) Ադապտացված է Ադապտացված չէ	5 0
7	2016թ., 2017թ. և 2018թ 9 ամիսների միջին շրջանառությունը դրամով Մինչև 500 մլն 500 - 1000 մլն 1000 - 1500 մլն 1500 - ից բարձր	5 10 15 20

8	Արտադրող ընկերության կողմից տրված հեղինակագրումը մատակարարին առկա է առկա չէ	10 0
9	Տեղակայանքի նախագծի Շեֆինջիներինգ առկա է առկա չէ	5 0

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Ապրանքի մատակարարման և ֆինանսավորման ժամկետը՝ 2019թ. I կիսամյակ:

Հայտերը ներկայացնել հայերեն կամ ռուսերեն մինչև 15.01.2019թ., ժամը 15⁰⁰, «ՀրազՁԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

Հայտերի բացումը տեղի կունենա 15.01.2019թ., ժամը 15³⁰-ին, «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ում:

Մրցույթի պատվիրատուն և ֆինանսավորողը «ՀրազՁԷԿ» ԲԲԸ է:

Մրցույթի հարտարառությունը և հրավերի փաթեթը տեղադրված են «ՀրազՁԷԿ» ԲԲԸ կայքի կայքում՝ www.raztes.am:

Մրցույթի հրավերի փաթեթի և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել «ՀրազՁԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1,

Հեռ. (223) 6-07-12, e-mail: info@raztes.am.

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Գլխավոր տնօրենի տեղակալ - գլխավոր ճարտարագետ Ա. Մնացականյանին

հեռ. (+37493) 93-22-33:

Հ Ր Ա Վ Ե Ր

(Կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն)

1. Սույն հրավերը տրամադրվում է «ՀրազդեԿ» ԲԲԸ-ի կողմից 2018թ. նոյեմբերի 24-ին Տեղեկագրերում հրապարակված **ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ԷԳԱ-34/20.11.18-ԱՄ** ծածկագրով
 - Եռաֆազ զսպանակային բանեցումով – 4 (չորս) հատ էլեգազային անջատիչի,
 - Միաֆազ զսպանակային բանեցումով – 6 (վեց) հատ էլեգազային անջատիչի
 գնման բաց մրցույթի հայտարարության հիման վրա:

2. Մրցույթի ծածկագիրը՝ ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ԷԳԱ-34/20.11.18-ԱՄ

3. Հայտը ներկայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն:

4. Մասնակցի որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատումը կկատարվի ՀՀ կառավարության 04.05.2017թ. №526-Ն որոշման 59-րդ կետի պահանջներին համապատասխան, իսկ մասնակցի կողմից հայտարարություն չներկայացնելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին համապատասխան:

5. Գնման առարկայի բնութագիրը՝

1. Եռաֆազ էլեգազային անջատիչի տեխնիկական բնութագիրը

<i>Տեխնիկական տվյալները</i>	<i>Մինիմալ անհրաժեշտ տվյալները</i>
	SF6
Տիպը	1ադեղմարման խցիկ
Շրջակա միջավայրի ջերմաստիճանների տիրույթը	-30/+40°C
Ավտոմատ կրկնվող միացումների ֆազերի քանակը	3
Մեկուսացման ունակությունը	
Տեղադրման բարձրությունը ծովի մակերևույթի նկատմամբ	1750 մ
Նոմինալ լարումը	245 կՎ
Աշխատանքի լարումը	245 կՎ
Կարճաժամկետ փորձարկման արդյունաբերական հաճախականության լարումը	
- Հողի նկատմամբ	460 կՎ
- Հպակների միջև	460 կՎ
- Բնեռների միջև	460 կՎ
Շանթի ինպուլսի փորձարկման լարումը	
- Հողի նկատմամբ	1050 կՎ
- Հպակների միջև	1050 կՎ
- Բնեռների միջև	1050 կՎ
Անջատման ունակությունը	
Ադեղի առավելագույն ժամանակը	21 մվրկ
Նոմինալ հոսանքը	2000 Ա
Ջերմակայունության հոսանքը	40 կԱ
Ջերմակայունության հոսանքի անցման ժամանակը	3 վրկ
Նոմինալ հաճախականությունը	50 հց
Փոխարկման նոմինալ հաջորդականությունը	O-0,3s-CO3min-CO
Միացման նոմինալ հոսանքը կարճ միացման դեպքում	100 կԱ
Առաջին անջատող բնեռի գործակիցը	1,3 p.u.

Անջատման նորմավորված հոսանքը ֆազերի ապահամաձայնեցման դեպքում	10	կԱ
Ֆազերի ապահամաձայնեցման գործակիցը	2	p.u.
Ռինակման հոսանքների խախտումը		
Զբեռնված գծի անջատման հոսանքը	125	Ա
Գերլարման գործակիցը	1,40	p.u.
Փոխարկման տևողությունը		
Միացում/Անջատում հրահանգի նվազագույն տևողությունը	56	մվրկ
Միացման տևողությունը	65±6	մվրկ
Խզման նոմինալ տևողությունը	55	մվրկ
Անջատման տևողությունը	36±4	մվրկ
Ընդհատման տևողությունը	300	մվրկ
Բևեռների միաժամանակության տարբերությունը (Միացում/Անջատում)	Max.3/max.2	մվրկ
Կառուցվածքի տվյալները		
Շարժաբեռների քանակը	1	
Բևեռների քանակը	3	
Կանգնակների քանակը	2	
Աղեղմամբման խցերի քանակը	1	
Նվազագույն տարածությունները օդում		
- Մինչև հող	2200	մմ
- Բաց անջատիչի միջոցով	2200	մմ
- Ֆազից՝ ֆազ	2385	մմ
Միջֆազային հեռավորությունը	2800	մմ
Կորուստի ուղու երկարությունը		
- Մինչև հող	25	մվրկ
- Բաց անջատիչի միջոցով	31	վրկ
Աղեղմարիչ միջավայր		
SF6- նոմինալ ճնշումը 20°C դեպքում	6	Բար հար
SF6- ճնշումը 20°C դեպքում	5,2	Բար հար
Ընդհանուր բլոկավորումը 20°C դեպքում	5	Բար հար
SF6-ի քանակը 1 անջատիչում	25,2	կգ
SF6-ի տարեկան կորուստը, ոչ ավել քան	0,5	%
Շարժաբեռների մեխանիզմը		
Զսպանակային շարժաբեռ		
Ղեկավարման բլոկ		
Ղեկավարման շղթաների լարումը	220 DC	Վ
Շարժիչի լարումը	220 DC	Վ
Տաքացուցիչի լարումը	380/220 AC	Վ
Լարման թույլատրելի շեղումները	+10/-15%	
Ազատ օժանդակ հպակներ (HO/H3/Π)	10/10/1	
Կառավարում և ստուգում		
Կապուղիների քանակը	1	
Անջատման կոճերի քանակը	2	
Միացման կոճերի քանակը	1	
Ընթացիկ նորոկման ժամկետը	12 տարին/մեկ	
Հիմնանորագման ժամկետը	25 տարին/մեկ	
Մեկուսիչների գույնը	Շագանակագույն	

2. Միաֆազ էլեգագային անջատիչի տեխնիկական բնութագիրը

<i>Տեխնիկական տվյալները</i>	<i>Մինիմալ անհրաժեշտ տվյալները</i>	
Շրջակա միջավայրի ջերմաստիճանների տիրույթ	-30/+40°C	
Ավտոմատ կրկնվող միացումների ֆազերի քանակի	1/3	
Մեկուսացման ունակությունը		
Տեղադրման բարձրությունը ծովի մակերևույթի նկատմամբ	1750	մ
Նոմինալ լարումը	245	կՎ
Աշխատանքի լարումը	245	կՎ
Կարճաժամկետ փորձարկման արդյունաբերական հաճախականության լարումը		
- Հողի նկատմամբ	460	կՎ
- Հպակների միջև	460	կՎ
- Բևեռների միջև	460	կՎ
Շանթի իմպուլսի փորձարկման լարումը		
- Հողի նկատմամբ	1050	կՎ
- Հպակների միջև	1050	կՎ
- Բևեռների միջև	1050	կՎ
Անջատման ունակությունը		
Աղեղի առավելագույն ժամանակը	21	մվրկ
Նոմինալ հոսանքը	2000	Ա
Ջերմակայունության հոսանքը	40	կԱ
Ջերմակայունության հոսանքի անցման ժամանակը	3	վրկ
Նոմինալ հաճախականությունը	50	հց
Փոխարկման նոմինալ հաջորդականությունը	O-0,3s-CO3min-CO	
Միացման նոմինալ հոսանքը կարճ միացման դեպքում	100	կԱ
Առաջին անջատող բևեռի գործակիցը	1,3	p.u.
Անջատման նորմավորված հոսանքը ֆազերի ապահամաձայնեցման դեպքում	10	կԱ
Ֆազերի ապահամաձայնեցման գործակիցը	2	p.u.
Ունակման հոսանքների խախտումը		
Չբեռնված գծի անջատման հոսանքը	125	Ա
Գերլարման գործակիցը	1,40	p.u.
Փոխարկման տևողությունը		
Միացում/Անջատում հրահանգի նվազագույն տևողությունը	53	մվրկ
Միացման տևողությունը	62±6	մվրկ
Խզման նոմինալ տևողությունը	56	մվրկ
Անջատման տևողությունը	37±4	մվրկ
Ընդհատման տևողությունը	300	մվրկ
Բևեռների միաժամանակության տարբերությունը (Միացում/Անջատում)	Max.3/max.2 մվրկ	
Կառուցվածքի տվյալները		
Շարժաբեռների քանակը	3	
Բևեռների քանակը	3	
Կանգնակների քանակը	3	
Աղեղամարման խցիկների քանակը	1	

Միջֆազային հեռավորությունը	2800	մմ
Նվազագույն տարածությունները օդում		
- Մինչև հող	2200	մմ
- Բաց անջատիչի միջոցով	2200	մմ
- Ֆազից՝ ֆազ	2385	մմ
Միջֆազային հեռավորությունը	2800	մմ
Կորուստի ուղու երկարությունը		
- Մինչև հող	25	մվրկ
- Բաց անջատիչի միջոցով	31	վրկ
Աղեղմարիչ միջավայր		
SF6- նոմինալ ճնշումը 20°C դեպքում	6	Բար հար
SF6- ճնշումը 20°C դեպքում	5,2	Բար հար
Ընդհանուր բլոկավորումը 20°C դեպքում	5	Բար հար
SF6-ի քանակը 1 անջատիչում	25,2	կգ
SF6-ի տարեկան կորուստը, ոչ ավել, քան	0,5	%
Շարժաբեռների մեխանիզմը		
Զսպանակային շարժաբեռ		
Ղեկավարման բլոկ		
Ղեկավարման շղթաների լարումը	220 DC	Վ
Շարժիչի լարումը	220 DC	Վ
Տաքացուցիչի լարումը	380/220 AC	Վ
Լարման թույլատրելի շեղումները	+10/-28%	
Ազատ օժանդակ հպակներ (HO/H3/PI)	9/9/1	
Կառավարում և ստուգում		
Կապուղիների քանակը	1	
Անջատման կոճերի քանակը	2	
Միացման կոճերի քանակը	1	
Ընթացիկ նորոկման ժամկետը	12 տարին/մեկ	
Հիմնանորագման ժամկետը	25 տարին/մեկ	
Մեկուսիչների գույնը	Շագանակագույն	

6. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կկատարվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի 2) ենթակետով սահմանված կարգով՝ մրցույթում հաղթող կճանաչվի այն մասնակիցը, որի առաջարկված գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:

7. Պայմանագրի նախագիծը տրամադրվում է մասնակցի գրավոր պահանջով:

8. Գնումն իրականացվում է մեկ փուլով 2019թ. առաջին եռամսյակում:

9. Հայտով ներկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը: Գնային առաջարկը ներկայացնել մրցույթով հայտարարված երկու ապրանքների համար առանձին-առանձին:

10. Հայտով ներկայացված առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը «ՀրագՋԷԿ» -ի տարածք:

11. Հայտի և պայմանագրի ապահովումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32 և 35 հոդվածների համաձայն:

12. Հայտը ներկայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ փաստաթղթային ձևով, մեկ բնօրինակ, հայերեն կամ ռուսերեն, մինչև 15. 01. 2019թ. ժամը 15⁰⁰, «ՀրազՁԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

13. Մրցույթին առնչվող հարցերով դիմել՝ «ՀրազՁԷԿ» ԲԲԸ, գնահատող հանձնաժողովի քարտուղար Ս.Մարգարյանին, հեռ. (223) 6-07-12, www.raztes.am:

14. Հայտերը կբացվեն 2019թ. հունվարի 15-ին ժամը 15.30-ին նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության:

15. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման դրույթներով:

16. Պայմանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո:

17. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները կամ ընդունված որոշումները բողոքարկելու՝ մասնակցի իրավունքը և կարգը սահմանված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46 և 50 հոդվածներով:

18. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է:

19. Սույն գնման հայտի առնչությամբ պատվիրատուն այլ տեղեկատվություն չունի:

ԳՏՏ-գլխավոր ճարտարագետ,
Գնումների հանձնաժողովի նախագահ՝

Ա.Մնացականյան